«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

28.10.2025թ.

Նարեկ Նազարյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Արմինե Մովսիսյանի, Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով Սերգեյ Գրիգորյանի և Նինա Չալտիկյանի ներկայացուցիչ ,փաստաբան Լիլիթ Հայրապետյանի /այսուհետ՝ դիմումատու/ Նարեկ Նազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և համապատասխան կարգապահական տույժ հարուցելու մասին դիմումը, որի անունից հանդես են եկել Սերգեյ Գրիգորյանը և Նինա Չալտիկյանը 17.12.2024թ.05.2025թ./ պարզեց՝

Դիմումատուի կողմից ինչպես ՀՀ Արդարադատության նախարարությանը, այնպես էլ ՀՀ սնանկության դատարան ներկայացրել է Դիմում -Միջնորդություն Նարեկ Նազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ ձեռնարկելու կամ վերջինիս գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ ,որով գրությամբ ուղարկվել է «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ին և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի հիմքով, կարգապահական հանձնաժողովի կողմից հարուցվել է կարգապահական վարույթ:

Ըստ դիմումատուի ներկայացված միջնորդությանը հայտնել է ,որ Սերգեյ Գրիգորյանը դատական ակտերով Ս.Լավչյանի նկատմամբ պարտավորություն ուներ կատաելու և որպեսզի պարտավորությունը կատարվեր նրա կինը Նինա Չալիկյանը որպես գույքերում համատեղ սեփականության իրավունք ունեցող անձ դիմել է ընդհանուր իրավասության դատարանը գույքերում բաժինները առանձնացնելու համար : Ս Լավչյանը ՀՀ սնանկության դատարան ներկայացրել է դիմում Սերգեյ Գրիգորյանին սնանկ ճանաչելու պահանջով և 17.01.2022թ վճռով Սերգեյ Գրգորյանը ճանաչվել է սնանկ : Վճռից հետո ընդհանուր իրավասության դատարանը Նինա Չալտիկյանի հայցապահանջները քննության չի առել ,քաղաքացիական գործի վարույթը կարճվել է ,որով զրկվել է Նինա Չալտիկյանի համատեղ ձեռք բերված գույքի արագ վաճառքից վերջինիս պարտավորությունները մարելու կատարումից:

ՀՀ սնանկության դատարանի 26.01.2022թ որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Իզաբելլա Ցամաքյանը :

Վերջինս Սերգեյ Գրիգորյանի գույքերի նկատմամբ կիառել է արգելանքներ : Սերգեյ Գրիգորյանին և նրա կնոջը ՝ Նինա Չալտիկյանին համատեղ սեփականության իրավունքով է պատկանում թե անշարժ գույքեր ,թե շարժական գույքեր Ford Explorer և Mitsubisihi Carisma մակնիշի երկու ավտոմեքենան:Ավտոմեքենաները սնանկության գործով կառավարիչ Իզաբելլա Ցամաքյանը ընդունել է ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայությունից ,ավտոմեքենաների հանձնման -ընդունման ակտի համաձայն դրանք վնասվածքներ չեն ունեցել ,շահագործման ենթակա են եղել :Սնանկության գործով կառավարիչ Ի.Ցամաքյանը ՀԿԱ ծառայությունից ավտոմեքենաները տեղափոխելուց հետո Սերգեյ Գրիգորյանին և ոչ էլ ավտոմեքենաների համասեփականատեր Նինա Չալտիկայնին չի տեղեկացրել թե ուր է դրանք տեղափոխում և որևէ տեղեկություններ չեն ունեցել և հայցադիմումներ է ներկայացրել դատարան համատեղ սեփականության իրավուքնով պատկանող գույքերում պարտապանի բաժինը որոշելու

պահանջներով : Քաղաքացիական գործերով մինչև դատարանների կողմից դատավարական գործողությունների կատարումը Սերգեյ Գրիգորյանի պարտավորությունը Ս. Լավչյանի նկատմամբ ամբողջությամբ կատարվել են : Սնանկության հատուկ հաշվին փոխանցվել է կառավարչի կողմից ներկայացված վարչական ծախսերը և կառավարչի վարձատրությունը :Կառավարիչ Իզաբելլա Ցամաքյանը պարտապանի կնոջը Նինա Չալտիկյանին հեռախոսակապի միջոցով հայտնել է ,որ քաղաքացիական 4 գործերից հրաժարվելու դիմում է ներկայացրել ,որից հետո գույքերը արգելանքներից կազատի և ավտոմեքենաները կհանձնի ու սնանկության վարույթը կավարտվի :Սնանկության կառավարիչ Իզաբելլա Ցամաքյանը հրաժարվել է միայն 2 քաղաքացիական գործերից ,իսկ 2 գործեր դեռ շարունակվում են և քաղաքացիական գործերը առարկայազուրկ են դարձել : Դիմել են և ընդհանուր իրավասության դատարան և սնանկության դատարան սնանկության գործը և քաղաքացաիական գործերը կարճելու կամ ավարտելու վերաբերյալ ,և միայն 12.06.2024թ ՀՀ սնանկության դատարանի կողմից կայացվել է որոշում ,որ Իզաբելլա Ցամաքյանի լիազորությունները դադարեցվել են և նոր կառավարիչ է նշանակվել Նարեկ Նազարյանը և վերջինս բավականին երկար ժամանակ անգործության է մատնել սնանկության գործը :

Ըստ լսումների ընթացքում առկա տվյալների պարզվել է, որ Նարեկ Նազարյանը սնանկության գործը նախկին կառավարչից չէր կարողացել վերցնել ,քանի որ Իզաբելլա Ցամաքյանը բավականին երկար ժամանակ ՀՀ ում չէր :Սնանկության գործի շրջանակներում պետք է մանրամասն ուսումնասիրվեր և քաղաքացիական գործը և սնանկության գործը : Սույն գործով հարուցվել է կարգապահական վարույթ, իսկ «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ի, Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի հիմքով՝ կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Մովսիսյանի կողմից, նշանակվել են կարգապահական հանձնաժողովի նիստեր:

Հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, այն է՝ Նարեկ Նազարյանի կողմից «Սնանկության գործով կառավարիչների կոլեգիա» ԻԿԿ-ին է ներկայացվել միջնորդություն, որով վերջինս հայտնել է, որ արդեն իսկ ընդունել է սնանկությա գործը և միջնորդություն է ներկայացրել դատարան այն ավարտելու վերաբերյալ ,քանի որ պարտավորությունները այլևս մարված են և պարտատեր չկա ,նախկին կառավարչի օգնականը ավտոմեքենաները հանձնել է պարտապանին և կնոջը և քաղաքացիական գործերը կարճվել են հետևաբար վեճն ըստ էության սպառվել է, և վերջինիս ներկայացուցիչ Լիլիթ Հայրապետյանը խնդրել է սնանկության գործերով կառավարիչ՝ Նարեկ Նազարյանի կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը կարճել:

Նշված ժողովին ներկայացել էին կարգապահական հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը , Հարություն Գևորգյանը և Արմիեն Մովսիսյանը և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նիստի անցկացման համար քվորումն ապահովված էր, ուստի նշված նիստը համարվեց բացված, չնայած այն հանգամանքին, որ ինչպես դիմումատուն, այնպես էլ Նարեկ Նազարյանը պատշաճ ծանուցված են եղել նիստի անցկացման տեղի և ժամի մասին,սակայն ներկայացել է միայն սնանկության գործով կառավարիչ Նարեկ Նազարյանը :

Ժողովը բացեց կարգապահական հանձնաժողովի նախագահ Ա.Սարգսյանը, որը մասնակիցներին ընթերցեց ներկայացված վերը նշված դիմումը և խնդրեց հայտնել իրենց կարծիքը ներկայացված դիմումի վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը հայտնեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ինչպես դիմումատուն, այնպես էլ՝ սնանկության գործով կառավարիչը հաշտվել են, ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճել:

Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Սարգսյանը հայտնեց, որ եթե բողոք բարձրացնող անձը այս պահի դրությամբ գտնում է, որ չկա վեճ և վարքագծի կանոնի խախտում, ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճելու վերաբերյալ

Հանձնաժողովի անդամ, նախագահ Արման Սարգսյանը հայտնեց, որ չնայած նրան, որ իրականում կարող էին դիմումատուի կողմից դիմումում ներկայացրած հանգամանքները իրոք հանդիսանալ կառավարչի կողմից վարքագծի կանոնի խախտում, սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումից ըստ էության դիմումատուն հրաժարվել է՝ հայտնել է, որ վեճը սպառվել է և խնդրել է վարույթը կարճել, իսկ նման պայմաններում կարգապահական հանձնաժողովը չունի ըստ էության դիմում, ուստի նույնպես հայտնեց կարծիք, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 7-րդ ենթակետը նախատեսում է, որ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնելը, կառավարիչը վերացրել է կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացած հանգամանքները:

Եթե դիտարկեն վերը նշված նորմի փաստական հանգամանքները, ապա ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ սույն հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի որ ըստ էության, կառավարչի կողմից լուծվել է դիմումում նշված վեճը և դիմումատուի կողմից այլևս որևիցե մի պահանջ առկա չէ:

Կից ներկայացվում է կարգապահական վարույթին առընչվող փաստաթղթերը՝ թերթից, ինչպես նաև նիստի ձայնագրության կրիչը:

Ա.Սարգսյան
Լ.Սարգսյան
Հ.Գևորգյան
Ա.Մովսիսյան